

Ս. Մ. Բրահամյան

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ*

Պայմանական եղանակը հայերենի քերականության մեջ մտցրել է աշխարհարարի քերականության առաջին դասագրքի հեղինակ Ատ. Պալասանյանը իր «Կերականության մայրենի լեզուն» աշխատությունում: Պալասանյանը պայմանական եղանակի համար ճանաչում է երկու ժամանակ. ներկա՝ կտեսնեի և անցյալ՝ տեսած կլինեի. իսկ կտեսնեմ ձևը համարում է սահմանական և, ի միջի այլոց, չի ճանաչում սահմանականի ապառնի բաղադրյալ ձևը՝ տեսնելու եմ, որպես եղանակային ձև:

Պայմանական եղանակը, իբրև այդպիսին, մերժվում է պրոֆ. Մ. Արեղյանի կողմից: Մ. Արեղյանը Ս. Պալասանյանի ընդունած պայմանական եղանակը և սահմանական ապառնին միացնելով, կազմում է մի նոր՝ ենթադրական եղանակ: «Ենթադրականը կարելիության կամ հնարավորության եղանակն է, որով եղելությունը պատկերացվում է ոչ իբրև իրական¹, այլ իբրև կարծված, մտածված, հնարավոր, այսինքն, որ կարող է լինել, գուցե, կարելի է լինի², Ուրեմն՝ Մ. Արեղյանի մոտ ենթադրական է այն, ինչ որ Պալասանյանի մոտ էր պայմանական և ստույգ կատարվելիք:

Սովետահայ քերականագիտությունը ժառանգեց ենթադրական եղանակը Արեղյանի ըմբռնմամբ, այն տարբերությամբ, որ դպրոցական քերականության մեջ պրոֆ. Հարիբյանի կողմից այն անվանվում է նաև պայմանական: «Պայմանական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս ենթակայի կատարելիք մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը հաճախ պայմանական կամ ենթադրական է³, Պրոֆ. Հարիբյանը դպրոցական քերականության 1951 և 1952 թվականների հրատարակությունների մեջ վերանայել է այդ սահմանումը. «Պայմանական կամ ենթադրական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս ենթակայի կատարելիք մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը հաճախ ստույգ է, երբեմն ենթադրական է, երբեմն պայմանական⁴, «Պայմանական կամ ենթադրական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս ենթակայի կատարելի մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը երբեմն ենթադրական է, երբեմն պայմանական⁵, իսկ պրոֆ. Գ. Սևակը այդ եղանակը համարում է գուտ ենթադրական. «Ենթադրական եղանակը

* Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով:

¹ Այս և հետագա մեջբերումներում ընդգծումները մերն են—Ս. Ա.:

² Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 242—243:

³ Ա. Ղաբիրյան, Հայոց լեզվի քերականություն, 1949, էջ 213:

⁴ Ա. Ղաբիրյան, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 5—6 դասարանների համար, 1951, էջ 269:

⁵ Ա. Ղաբիրյան, Հայոց լեզվի դասագիրք, 1952, էջ 274:

ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարումը խոսողի կողմից անհաստատ, ենթադրաբար է ասվում¹։ Մի առիթով Ա. Շանիձեն կ'եղանակիչով բայերի ապառնի ձևերը համարել է սանմանական ապառնի²։

Ինչպես տեսնում ենք, քննվող եղանակի մասին, նույն կարծիքին չէին քերականները անցյալում և չեն այժմ։ Ո՞րն է այս հակասական տեսակետների պատճառը։ Ինչ՞ու միևնույն եղանակին վերագրում են այնպիսի տարբեր բովանդակություններ, ինչպիսիք են պայմանականությունը, սահմանականությունը և ենթագրականությունը։ Փորձենք պատասխանել այս հարցին, որի համար, սակայն, անհրաժեշտ է նախօրոք պարզել, թե ի՞նչ է բայի եղանակը։

* * *

Բայի եղանակը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ՝ գործողության ռեալության տեսակետից։ Սակայն խոսողի վերաբերմունքը լոկ սուբյեկտիվ խոդողություն չէ. նա ունի օբյեկտիվ հիմք։

Այսպես, ամեն մարդ գործածում է զնալու եմ տուն նախադասությունը, որտեղ գնալու գործողության նկատմամբ խոսողի վերաբերմունքը վճռական է, հաստատ։ Այդ հաստատ վերաբերմունքի օբյեկտիվ հիմքն է զնալու եմ բայի ցույց տված գործողության կատարման համար անհրաժեշտ պայմանների (գնալու միջոցներ, ժամանակ և այլն) գոյությունը։

Բայց բոլոր մարդիկ կարող են ասել «վեպ եմ գրելու»։ Իհարկե, ո՛չ, Նրանք, ովքեր չունեն վեպ գրելու, որպես ապագա, ստույգ գործողության հիմք. այդպիսի ունակություն, այդ գործողությունը չեն արտահայտի սահմանական եղանակով. այլ լավագույն դեպքում՝ ըղձականով՝ (երանի) գրեմ։

Երբեմն խոսողի վերաբերմունքի հիմք հանդիսանում են ոչ թե գործողության համար անհրաժեշտ պայմանները, այլ ինքը փաստական գործողությունը։ Այդպիսիք են սահմանական եղանակի անցյալին և ներկային պատկանող բայաձևերը. գնացել է, գնացի, գնում էի, գնում եմ։

Սակայն գործողության փաստական տարբեր վիճակները կարող են հիմք հանդիսանալ նույն եղանակի համար. գնացել է, գնում է, գնալու է։

Այս բայաձևերի մեջ արտահայտված գործողության փաստական վիճակը տարբեր է։ Գնացել է ձևը ցույց է տալիս, որ գործողությունը լրիվ է կատարված, իսկ զնալու է բայաձևի ցույց տված գործողությունը չի կատարված։ Սակայն բոլորի մեջ էլ խոսողի վերաբերմունքը գործողության ստույգ կատարման նկատմամբ հաստատ է։ Եթե առաջին և երկրորդ օրինակներում այդ հաստատ վերաբերմունքի համար հիմք է հանդիսանում գործողության փաստական վիճակը (որի համար անկասկած գոյություն են ունեցել անհրաժեշտ պայմաններ), ապա երրորդ օրինակի մեջ այդպիսի հիմք հանդիսանում են գործողության կատարման համար անհրաժեշտ պայմանների գոյությունը։

¹ Գ. Սեվակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, պրակ 1, 1939, էջ 188.

² Ա. Շանիձեն, Մի նոր գործ հայ բարբառագիտության մասին, ՄՍՍՐ ԳԱ-ի Հայ-հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940, № 3, էջ 108.

Այս նշանակում է, որ սահմանական եղանակը միշտ չէ, որ համընկնում է բայի ցույց տված փաստական գործողություն հետ և միայն փաստական գործողությունը չէ, որ կարող է հիմք հանդիսանալ գործողության ստույգ լինելու նկատմամբ հաստատ, վճռական վերաբերմունքի։ Այսպիսով, խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, որպես եղանակի բովանդակություն, ոչ թե սոսկ սուբյեկտիվ վերաբերմունք է, այլ ունի օբյեկտիվ հիմք։ յուրաքանչյուր եղանակի հիմքում ընկած է տվյալ եղանակային ձևի ցույց տված գործողության իրական, փաստական վիճակի կամ այդպիսին դառնալու անհրաժեշտ պայմանների որոշ աստիճան։

Բայց երբեմն միևնույն իրողության մասին մարդիկ տարբեր եղանակներով են արտահայտում իրենց վերաբերմունքը։ Այսպես, մեկը հաշվի առնելով որոշ պայմաններ ասում է. կարող է, որ բերքն այս տարի առատ լինի, կամ գուցե առատ լինի։ Իսկ մի ուրիշը լրիվ օբյեկտիվ հիմք է գտնում առատ բերք լինելու մասին վճռարար արտահայտվելու՝ այս տարի բերքը առատ է լինելու։ Եվ այդ տարվա բերքը առատ է լինում։ Ստացվում է, որ նույն իրողությունը մեկը արտահայտում է ըղձական, մի ուրիշը՝ սահմանական եղանակով։ Պատճառն այն է, որ մեկը կարողացել է ճիշտ հաշվի առնել առատ բերքի համար անհրաժեշտ պայմանները և ըստ այդմ եզրակացություն անել, առատ բերք լինելու մասին արտահայտվել վճռարար, իսկ մյուսը՝ ոչ։ Հնարավոր է, որ օբյեկտիվ իրողության ճանաչումը մարդկանց մոտ այնքան տարբեր լինի, որ նրանցից մեկը հաստատի, իսկ մյուսը բացասի տվյալ գործողությունը կամ իրողությունը։

Այսպես, և Այս ձմեռ եղանակը խիստ է լինելու։ Մեկ ուրիշը հակառակն է պնդում. և՛ խիստ չի լինելու, մեղմ է լինելու։

Նման հակասական կարծիքների մեջ, հասկանալի է, որ միայն մեկ բայի ցույց տված գործողությունն է իրական, իսկ մյուսը՝ ոչ։ Բայց տվյալ գործողությունը թե՛ հաստատող և թե՛ բացասող բայերը նույն եղանակին պատկանող բայեր են, քանի որ բայի եղանակի համար կարևորը գործողության նկատմամբ ունեցած խոսողի վերաբերմունքն է, որը նույնն է ալի և նման օրինակներում։

Ուրեմն՝ բայի եղանակի համար անհրաժեշտ է գործողության կամ նրա պայմանների տվյալ աստիճանի ճանաչում, և տվյալ եղանակի մեջ արտահայտում է գործողության կամ նրա պայմանների ճանաչված աստիճանը։

Բայի եղանակի համար անհրաժեշտ այս երկու, եթե կարելի է ասել, տարրերը (գործողության օբյեկտիվ հիմքը, կամ պայմանները և նրա չանաչումը) խառցված են խոսողի վերաբերմունքի, որպես բայի եղանակի անբաժան հատկանիշի մեջ։

Եղանակի համար անհրաժեշտ օբյեկտիվ հիմքը չի բացասում, որ խոսողը երբեմն սուբյեկտիվ վերաբերմունք ունենա գործողության նկատմամբ և միևնույն գործողությունը արտահայտի տարբեր, հատկապես իմաստով իրար մոտ եղանակներով։ Սա վերաբերում է ոճարանությանը և մեր քննության սահմաններից դուրս է։ Մենք չենք խոսում նաև այն մասին, որ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը տարբեր եղանակներում տարբեր չափով է արտահայտվում։

Բայի եղանակի կատեգորիայի էությունը բացահայտումն ունի նաև պրակտիկ նշանակություն։ Անհրաժեշտության դեպքում, տվյալ վիճելի եղանակային ձևի եղանակը որոշելիս կարող ենք վերլուծել նրա բովանդակությունը ըստ այդ տարրերի, որով բովանական կհեշտանա գործը։ Այժմ անցնենք պայմանական եղանակի քննությանը։

ՊԱՅԵՐԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՌԵՆՆ

Պայմանական կամ ենթադրական ապառնին ցույց է տալիս, որ ենթակայի կատարելիք գործողություն կամ եղելություն ասելուց հետո տեղի կունենա կամ ստույգ, կամ ենթադրաբար և կամ պայմանով¹։ Նույն դասագրքի 1952 թ. հրատարակության մեջ պրոֆ. Ա. Ղարիբյանը այս սահմանումից հանել է ստույգաբար, թեև մի քանի տող վերև նա չի ժխտում, որ այդ բայաձևերը նաև ստույգ կատարելիք գործողություն են ցույց տալիս։ Առաջին իսկ հայադրից չափազանց տարօրինակ է նույն եղանակին, ավելին, նույն եղանակի նույն ժամանակին նման տարրեր բովանդակություններ վերագրելը։ ենթադրականություն, սահմանականություն, պայմանականություն։

Քննենք այդ հատկանիշներն առանձին-առանձին։ Ինչո՞ւ է արտահայտվում այս բայաձևերի պայմանականությունը (պայմանականի ապառնին քննելիս բայաձև ասելով նկատի ունենք ապառնիի ձևերը)։ Ահա այս հարցի պատասխանը պրոֆ. Ղարիբյանի մոտ, որը և առաջին անգամ դրանք պայմանական է համարել։ Տե՛րե խոստանաւ ինձ զիրք տալ, այսօր կգամ քեզ մոտ... կգամ բայաձևը ցույց է տալիս, որ ենթակայի գործողությունը կկատարվի ասելուց հետո և որոշ պայմանով²։ Ճիշտ չէ։ Կգամ բայաձևը չի ցույց տալիս, որ ենթակայի գործողությունը կկատարվի որոշ պայմանով, այլ՝ երե խոստանաւ ինձ զիրք տալ երկրորդական նախադասություններ։ Ե՛հ՛ն նետեք այդ երկրորդական նախադասությունը և կգամ բայաձևի ցույց տված գործողությունը պայմանի տակ չի տոնվի։

Քանի որ երևույթի էությունը կամ հատկանիշը գտնվում է ոչ թե այդ երևույթի գոյք, այլ նրա մեջ, և քանի որ այդ օրինակում կգամ բայի ցույց տված գործողությունը պայմանով կատարվելու հատկանիշը գտնվում է այդ բայից դուրս և ոչ թե նրա մեջ, հասկանալի է, որ այդ պայմանականությունը չի կարելի համարել կգամ բայի հատկանիշ։ Այսպես, ուրեմն՝ կգամ բայը պայմանական չէ։

Այստեղ պրոֆ. Ղարիբյանը շփոթում է երկու տարբեր բաներ՝ բառի, որպես ձևաբանության հիմնական միավորի հատկանիշը, նախադասության, որպես շարահյուսության հիմնական միավորի, հատկանիշի հետ։ Ի. Վ. Մտալինը միանգամայն որոշակի կերպով ցույց է տվել ձևաբանության և շարահյուսության սահմանները, այնպես որ դրանք կամ դրանց օբյեկտները չի կարելի շփոթել իրար հետ։

Եթե բայի եղանակը որոշելու լինենք նախադասության ընդհանուր

¹ Ա. Ղարիբյան, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 5—6 դասարանների համար, Երևան, 1951, էջ 270։

² Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, 1952, էջ 275։

եղանակով (եղանակ բառը այս վերջին դեպքում որպես քերականական տերմին չենք գործածում), շատ ու շատ թյուրիմացությունների մեջ կարող ենք ընկնել: Այսպես, ենթադրական պետք է համարենք սահմանական եղանակին պատկանող հետևյալ օրինակներում ընդգծված բայերը. կարծեմ եկել է, ինձ թվում է, թե անձրև է գալիս. ասում են վաղը գալու է, չգիտեմ որքանով է ճիշտ և այլն: Ինչպես տեսնում ենք, որոշ տիպի նախադասություններ և եղանակավորող բառեր կարող են այլևայլ երանգ տալ բային: Այս մեզ չպետք է թյուրիմացության մեջ գցի: Կասկածի ենթակա չէ, որ ընդգծված բոլոր բայերը պատկանում են սահմանական եղանակին, չնայած ընթացիկ նախադասություններում գալու գործողությունը ստույգ չէ:

Եվ վերջապես. չէ՞ որ բոլոր եղանակային ձևերն էլ կարող են երկրորդական նախադասությունների միջոցով պայմանի տակ առնվել. ուրեմն բոլոր եղանակային ձևերը պետք է համարենք պայմանական: Օրինակներ՝ «Այս նպատակն իրականացնելու համար մենք պետք է ջախջախենք գերմանա-ֆաշիստական օկուպանտներին մինչև վերջին մարդը, եթե նրանք գերի չհանձնվեն» (Ի. Ստալին): «Եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են» (Մ. Գորկի): «Եթե իրոք ինձ ես սիրում, արի՛ գնանք կուկուտի» (Ն. Ջարյան): «Ինձ գնդակահարեցիք, թե ստում եմ» (Ն. Ջարյան):

Պայմանականությունը քննարկվող բայաձևերին հատուկ չլինելն է պատճառը, որ նրանք ավելի հաճախ գործածվում են պայմանականություն չարտահայտող նախադասություններում (չնայած, ինչպես տեսանք, պայմանականություն ունեցող նախադասություններում գործածվելիս էլ քննվող բայաձևերը չէ, որ պայմանական են):

Օրինակներ. «Երբեք մենք չենք լսել, որ մենք չենք խնայի մեր կյանքը և պատվով կկատարենք քո այդ պատվիրանը» (Ի. Ստալին): «Հեռու չէ այն օրը, երբ թշնամին կիմանա Կարմիր Բանակի նոր հարվածների ուժը: Մեր փողոցում էլ տոն կլինի» (Ի. Ստալին): «Մինչև վերջը կլինենք կայուն, մեր կյանքը չխնայելով կկռվենք թշնամու դեմ, կջախջախենք և կոչնչացնենք թշնամուն» (Թերթերից):

«Մենք երկիրը կպատենք պողպատակուղ զրահով,

և անգրավ բերդի պես նա միշտ կանգուն կլինի» (Գ. Սարյան):

«Ես ոչ ոքի չեմ սիրի... ոչ ոքի հետ չեմ ամուսնանա» (Ն. Ջարյան):

Կարծում եմ, որ շարունակելն ավելորդ է: Պարզ է, որ քննարկվող բայաձևերին պայմանականություն վերագրելը ճիշտ չէ:

Այժմ քննենք նույն բայաձևերը ենթադրական համարելու իրավացիությունը: Այդ բայաձևերը առաջին անգամ ենթադրական է համարել Մ. Արեգյանը, ինչպես է հիմնավորում նա այդ:

Մ. Արեգյանը անվատահունչություն է հայտնում ապառնի ժամանակի կամ, որ միևնույն է, ապագայի նկատմամբ: «Ամեն ապագայում ընկնող գործողություն ըստ ինքյան անհաստատ, անստույգ է, որով և մենք կարիք չենք զգում շատ անգամ ապագայում գնելու իրապես կատարվող, կատարելիք կամ սոսկ անցյալ գործողություն, այլ ավելի պետք ունինք այդպիսի գործողություն ենթադրելու կամ անհրաժեշտ համարելու»¹. Մի այլ

¹ Մ. Արեգյան, Աշխարհաբարի շարահյուսություն, 1912, էջ 232:

տեղ «Ամեն ապագայում ընկնող գործողությունն ըստ ինքյան անստույգ է, ուստի և կարելիությունս սպասելի»¹ իսկ կոնկրետ պայմանական եղանակի ապառնի մասին գրվում է «Վաղը կերթանք գրոսնելու խոսքը... իբրև ապագա գործողություն անստույգ և հնարավոր է լուր և կախված է հանգամանքներից, որոնք կարող են արգելք լինել իրականացմանը»²:

Ստացվում է, որ ապագայում կատարվելիք գործողությունն ցույց տվող բայերը տվյալ դեպքում ենթադրական եղանակի ապառնին պատկանող բայաձևերը ենթադրական են հենց այն պատճառով, որ նրանք ապառնի են:

Բանն այն է, որ ամեն ապագայում ընկնող գործողությունն ըստ ինքյան անհաստատ, անստույգ չէ, որով մենք կարիք ենք զգում չափ անգամ ապագայում դնելու իրապես կատարվող, կատարելի գործողություն: Վաղը կերթանք գրոսնելու խոսքը (նախադասությունը) իբրև ապագա գործողություն անստույգ չէ, այլ ստույգ և, իհարկե, կախված է հանգամանքներից (առանց որոնց ոչ մի գործողություն և ոչինչ չի կատարվում. օր. գնացի, գնում եմ, հաղթում ենք, կառուցում ենք), որոնք նախօրոք հաշվի են առնվել խոսողի կողմից: Այդ պատճառով էլ խոսողը վճարար և առանց որևէ վերապահության ասում է «վաղը կգնանք գրոսնելու»: Բայի եղանակի կատեգորիան քննելիս մենք տեսանք, որ սահմանական եղանակի անցյալ ներկա ժամանակները ցույց են տալիս փաստական գործողություն, իսկ ապառնի ժամանակը ցույց է տալիս ստույգ կատարվելիք գործողություն և խոսողի հաստատ վերաբերմունքի հիմքն է հանդիսանում և գործողության կատարման համար անհրաժեշտ նյութակետն պայմանների գոյությունը: Ո՛վ կտրող է կասկածի տակ առնել այն փաստը, որ երբ մենք ասում ենք «վաղը կգնանք գրոսնելու» հաշվի ենք առնում գրոսանքի գնալու համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ գնալու ժամանակ, եթե գրոսանքի տեղը հեռու է՝ նաև նյութական միջոցներ, ֆիզիկական կարողություն, ցանկություն և այլն:

Եթե գործողության կատարման համար անհրաժեշտ պայմաններից որևէ մեկը չկա և գործողության կատարումը որևէ չափով կասկածի ենթակա է, ոչ ոք չի ասի՝ կգնանք, այլ՝ գուցե գնանք, հավանական է, որ կգրնանք և այլն:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը քննարկելիք բայաձևերի ենթադրական իմաստը «հիմնավորում է» հետևյալ կերպ: «Հավանաբար նա այսօր կգա քեզ մոտ... կգա բայաձևը ցույց է տալիս, որ ենթակայի գործողությունը կկատարվի ենթադրաբար»³: Եվ արդ չէ, նկատել, որ այս օրինակի մեջ հավանաբար բառն էլ ենթադրական իմաստ է հաղորդում բային և ոչ թե բայն ունի այդ իմաստը (հիմա, գուցե եկել է, երևի գալիս է, կարծեմ գնաց և այլն):

Իսկ ի՞նչ է ենթադրությունը:

Ենթադրություն — 1. նախնական դատողություն, կոհեզում որևէ բանի մասին, հաստատ ապացույցներով չհիմնավորված միտք որևէ բանի մասին:

2. վերջնական մտադրություն չհասած միտք, խորհրդածություն, մտադրություն⁴:

¹ Ա. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, 1912, էջ 247:

² Նույն տեղում, էջ 249:

³ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի գրագիրք, էջ 247:

⁴ Ա. Н. Ушаков, Толковый словарь русского языка, т. III, 1939, стр. 721.

Ինչպես տեսանք, կղնանք բայաձևը արտահայտում է հիմնավորված և վերջնական մտադրություն հասած միտք, հետևապես և ենթադրական իմաստ ունեցող բառ չէ։

Բերենք այլ օրինակներ.

1. Դեմոկրատիան կհաղթի ագրեսիային։

2. Վե՛ս կղնամ, կմնամ գիշերը եզների մոտ,—

բացառանշեց Ալեքսանն ու հրացանն առավ (Ն. Ջարյան)։

Առաջին օրինակում խոսողի վերաբերմունքը դեմոկրատիայի հաղթանակի նկատմամբ վճռական է և հիմնավորված նրանով, որ նա լավ է ճանաչում հասարակության դարգացման ընթացքը, ինչպես և դեմոկրատիայի ու ագրեսիայի ուժերի փոխաբարերությունը։ Այնպես որ, սա հաստատապատկյուններով հիմնավորված միտք է։ Երկրորդ օրինակում Ալեքսանը տեսնելով որ եզների մոտ ոչ ոք չի ուզում մնալ, բոլորը վախենում են գասակարգային թշնամի Չաթնանց Բեյրութից, վերջինիս նկատմամբ ոխով բռնկված և անձնականը հասարակականի շահերին զոհաբերողի վճռականությունը, ասում է այդ բառերը և անմիջապես կատարում։ Ուրեմն՝ միտքը հասած է վերջնական մտադրության և ենթադրություն չէ։

Այլ օրինակներ. «Թշնամին կկասեցվի և ապա կջախջախվի» (Ի. Ստալին)։ «Հեռու չէ այն օրը, երբ Մովսեսական բանակը իր հուժկու հարվածով գազազած թշնամիներին հետ կշարտի Լենինգրադի մոտից և նրանից կմաքրի Բելոռուսիայի ու Ուկրաինայի, Լիտվայի և Լատվիայի, Էստոնիայի և Կարելիայի քաղաքներն ու գյուղերը, կազատագրի Մովսեսական Ղրիմը, և ամբողջ Մովսեսական հողի վրա կփողփսղան կարմիր գրոշները» (Ի. Ստալին)։ «Շուտով նրանք էլ կծուլվեն ներքևի համայնական տարածություններին և կոլխոզը Հացավանդում կլառնու համայնական» (Ն. Ջարյան)։

Վե՛լ այնտեղ ինչ տեսնեմ, նկատեմ,

կգամ քեզ մայրիկ, մին-մին կպատմեմ (Հ. Թումանյան)։

Կասկածի ենթակա չէ, որ ընդգծված բոլոր բայերի ցույց տված գործողությունների ստույգ կատարվելիք լինելը հիմնավորված է բավարար փաստերով, կամ հասած է վերջնական մտադրության, մի բան, որ հատուկ է սահմանականին և ոչ թե պայմանականին և ենթադրականին։

Բայց չէ՞ որ պայմանական կոչվող եղանակի առատնիի ցույց տված գործողությունը երբեմն կարող է չկատարվել։ Մենք կոչում ենք բայաձևերի կարծեցյալ ենթադրականությունը հիմնավորելու համար այսպիսի միտք կա Մ. Արեգյանի մոտ և երբեմն լսում ենք որոշ բնկերներից։ Վաղը կերքանք գրոսներու խոսքը... Իրրև ապաղա գործողություն անստույգ և հնարավոր է լոկ և կախված է հանգամանքներից, որոնք կարող են արգելք լինել իրականացմանը¹։

Չնայած, որ կերքանք ցույց է տալիս ստույգ կատարվելիք գործողություն, բայց, իսկապիս, հնարավոր է, որ չսպասվող որևէ պատճառով այն չկատարվի. ասենք ասողը հիվանդանա և չգնա զրոսներու։

Իսկ մի՞թե, եթե նա ասեր զնալու ենք, չէր հիվանդանա։ Ուրեմն՝ զնալու ենք բայաձևը ևս սահմանական չէ։ Հիվանդանալը այդ հարաբերություն մեջ պատահականություն է, որը նախօրոք հաշվի առնել հնարավոր

¹ Մ. Արեգյան, Աշխարհարարի արահյուսություն, 1912, էջ 249.

չէ։ Այդ պատճառով էլ կգնանք բայի մեջ խոսողը արտահայտել է գնալու գործողության նկատմամբ հաստատ վերաբերմունք, որը և եղանակի որոշման միակ սկզբունքն է։ Կամ, երբ մի անպարտաճանաչ աշակերտ իր տնային աշխատանքը չի կատարում, բայց ստում է «կատարել և թողել եմ տունը» իրավունք ունենք ընդգծված բայերը սահմանական չհամարելու։ Ն. Զարյանի «Հացավան» վեպում Մ. Ավսգյանի և Յոթնամեակների սուտ ու զրպարտչական բազմաթիվ մտքերի մեջ կարելի է գտնել սահմանական եղանակին պատկանող հարյուրավոր բայեր։ Սրանք էլ չհամարենք սահմանական, այն հիմնավորումով, որ դրանց ցույց տված գործողությունները իրական չեն։

Բայի եղանակը որոշելիս հաշվի չենք նստում ստի, զրպարտության և նման երևույթների հետ։ Կարևորը խոսողի վերաբերմունքն է գործողության ստույգ լինելու նկատմամբ, որը առողջ բանականության տեր, ճիշտ մտածող մարդկանց մոտ հիմնականում համապատասխանում է իրականությանը, իրական գործողությանը։

Եվ որ ամենակարևորն է՝ քերականությունը պործ չունի խոսքի և նախադասությունների կոնկրետ բովանդակության հետ (ճիշտ է այն, թե սուտ, հակասում է մեր շահերին, թե ոչ), որովհետև քերականությունը (ձևաբանությունը, շարանյութությունը) բառերի փոփոխության և նախադասության մեջ՝ բառերի կապակցության կանոնների ժողովածուն է¹։ այդ պատճառով էլ նա՝ քերականությունը... վերցնում է այն ընդհանուրը, ինչը կազմում է նախադասությունների մեջ բառերի փոփոխությունների և բառերի կապակցության հիմքը և դրանից կառուցում է քերականական կանոններ, քերականական օրենքներ²։

Այսպիսով, չի կարելի ժխտել, որ կգնանք բայը և նման բայաձևերը ցույց են տալիս ստույգ կատարվելիք գործողություն և հետևապես պատկանում են սահմանական եղանակին։

Այնուհետև, տրամաբանության մասին ծավալված դիսկուսիան Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» կլասիկ աշխատության լույսի տակ միաձայն հաստատեց, որ բոլոր ժողովուրդների մտածողությունը ենթակա է նույն օրենքներին։ Սա նշանակում է, որ ասենք, ռուսերենում ստույգ կատարվելիք գործողություն ցույց տվող բայաձևի թարգմանությունը հայերեն այլ բան ցույց տալ չի կարող, քան նույնպես ստույգ կատարվելիք գործողություն։ Եթե այս ճշմարտություն է, ապա պարագրքս է այն, թե ռուսերենի սահմանական եղանակի ապառնի կատարյալ կերպից համապատասխանում է հայերենի պայմանական ապառնին։

ор. напишу—կգրեմ³։

Ստացվում է, որ ռուսի կամ ռուսերեն խոսողի համար որպես ստույգ կատարվելիք գիտակցվող գործողությունը՝ հայը կամ հայերեն խոսողը գիտակցում է որպես այնպիսի գործողություն, որի կատարումը ենթադրվում է ասելուց հետո սրտը պայմանով, կամ ենթադրաբար։ Միևնույն

¹ Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1952, էջ 47։

² Նույն տեղում, էջ 48։

³ А. Гарибян, Грамматика русского языка, 1948, стр. 202.

աշակերտը ուսաց լեզվի ժամին հաճախ րայը ճիշտ կերպով պետք է դիտի թրպես ստույգ գործողություն, իսկ հաջորդ ժամին՝ հայոց լեզվի դասին պետք է կասկածի նույն րայի հայերենի տառացի թարգմանված ձևի (կգրեմ) ցույց տված միևնույն գործողության ստույգ լինելու վրա: Ինչպե՞ս կարելի է Ր. Վ. Ստալինի հայտնի կլասիկ աշխատությունից հետո քերականության մեջ այսպիսի պարադոքս թույլ տալ:

Թուսերենի և հայերենի այս համեմատությունը մի անգամ ևս ցույց է տալիս մեր եզրակացության ճշտությունը, որ քննվող րայաձևերը ցույց են տալիս ստույգ կատարվելիք գործողություն, որ նրանք ոչ թե պայմանական կամ ենթադրական են, այլ սահմանական:

Այսպիսով՝ հայերենում ունենք սահմանական ապառնիի երկու ձև, կգնամ և զնալու եմ: Ի՞նչ տարբերություն կա այս երկու ձևերի միջև:

Դանի որ այդ երկու ձևերն էլ ցույց են տալիս ստույգ կատարելիք գործողություն, պարզ է, որ դրանց միջև իմաստային մեծ տարբերություն գոյություն ունենալ չի կարող: Բայց քանի որ լեզուն պահպանում է այդ երկու ձևերն էլ, նշանակում է, որ դրանք պետք է ունենան իմաստային գոնե նուրբ տարբերություն: Փորձենք ցույց տալ այդ տարբերությունը:

Օրինակներ՝

1. Ուսուցիչը մտածում է Արամին ուղարկել գրքեր բերելու, որի մասին Արամը ոչինչ չգիտե:

— Արամ, վաղը կգնաս գրքեր բերելու:

— Այո, կգնամ (գնալու գործողության ապագա ստույգ կատարվելիք լինելը, որպես խնդիր, կատարողի համար նոր է ծագում և լուծվում՝ այդ մասին արտահայտվելու մոմենտին):

2. Արամի դասընկերը լսելով այդ մասին, հետո հարցնում է Արամին:

— Արամ, վաղը զնալու ես գրքեր բերելու:

— Այո, զնալու եմ (գնալու գործողության ապագա ստույգ կատարումը իրեն խնդիր նոր է ծագում կատարողի համար, դասընկերը այդ մասին հարցնում է, ինչպես և Արամը պատասխանում է, որպես իրեն՝ կատարողին նախօրոք հայտնի մի րանի):

Իհենք այս օրինակներում ընդգծված րայերի ցույց տված գործողությունների ստույգ լինելը կասկածի տակ առնելու իրավունք չունենք: Դրանք բոլորն էլ ստույգ կատարվելիք գործողություններ են: Բայց միաժամանակ այդ օրինակներում չենք կարող ընդգծված րայերի եղանակային մի ձևի փոխարինել մյուսով: Ինչո՞ւ:

Ինչպես տեսնում ենք, ընդգծված րայերը տվյալ ձևով արտահայտելը հետևանք է այն րանի, որ առաջին օրինակում գործողության ստույգ կատարման գաղափարը նոր է ծագում: Իսկ երկրորդում՝ ոչ: Այն հայտնի էր նախօրոք: Իսկ ինչու գործողության կատարման գաղափարի ծագման ժամանակի տարբերությունը հիմք է տալիս գործողությունը տարբեր ձևով երով արտահայտելու:

Անկասկած մեկի գլխում ստույգ կատարվելիք գործողության գաղափարի ծագումը հանդիսանում է տվյալ գործողության համար անհրաժեշտ պայմանները հաշվի առնելու իրեն «պրոբլեմի» դրական լուծում: Այս դեպքում խոսողի ուշադրության կենտրոնում ղեռ ընկած է գործողության կատարման հնարավորությունը և անհրաժեշտությունը հաշվի առնելը: Իսկ

հետո, երբ անցնում է այդ «պրոբլեմի» լուծման ժամանակը, նույն գործողության մասին խոսելիս գործողության կատարման հնարավորության հարցը առաջին դեպքի չափ ուշադրության կենտրոնում չի գտնվում՝ արդեն լուծված լինելու պատճառով։ Այդ գործողությունը արտահայտվում է արդեն որպես մտադրություն, բայց, իհարկե, որպես ստույգ մտադրություն։

Որ իսկապես այդ այդպես է, վկայում է այն, որ առաջին օրինակում ընդգծված բայաձևերը թեկուզ և խմատային որոշ տարբերությամբ, կարելի է փոխարինել հետևյալ բառերով՝ «կարող ես զնալ»։ «կարող եմ զնալ»։ Մինչդեռ այս բառերով չի կարելի փոխարինել զնալու եմ ձևը, որովհետև սրա մեջ խոսողի ուշադրության կենտրոնում գտնվում է ոչ թե գործողության կատարման հնարավորությունը, այլ պարզապես մտադրությունը։ Այդ պատճառով էլ գրքեր բերելու համար զնալու գործողությունը մտահղացման մոմենտին արտահայտված է կզնամ, իսկ հետո զնալու եմ ձևով։ Բայց ինչպես տեսնում ենք, խոսողի նույն գործողությունը մի դեպքում պայմանական, իսկ մյուս դեպքում սահմանական եղանակով արտահայտվելը չի պայմանավորված գործողության կատարման ստուգության է՛լ ավելի հիմնավորումով։ Երկու ձևերն էլ սահմանական են։

Սակայն մեր մամուլում, գեղարվեստական և քաղաքական գրականությունում մեջ ամեն քայլափոխում հանդիպում ենք նույն բայաձևերը գործածված այնպիսի գործողությունների համար, որոնց կատարումը իրեն խնդիր նոր չի ծագում։

Օր. Կոմունիզմը կգա դարերի,

դարերի վրայով կգա նա» (Փ. Սարյան)։

«Կոմունիզմը կգա» համեմատելով կոմունիզմը զալու է՝ չգործածվող ձևի հետ, զգում ենք, որ երկրորդ օրինակում, կարծեք թե կոմունիզմը ունի գալու ցանկություն, մտադրություն, մինչդեռ առաջին օրինակում կգա ցույց է տալիս գործողությունը կատարվելու օրյեկտիվ անհրաժեշտությունը, անխուսափելիությունը։ Այդ պատճառով էլ ասում ենք՝ խաղաղությունը կհաղթի պատերազմին (և ոչ թե հաղթելու է), քս հիշատակը կմնա մեր սրտերում (և ոչ թե մնալու է) և այլն։

Դանի որ գործողության կատարման մասին սովորաբար դատում, մտածում ենք հաշվի առնելով նրա կատարման հնարավորությունն ու անհրաժեշտությունը և բնականաբար քիչ է լինում անհրաժեշտ ուշադրության առնելու հատկապես գործողությունը կատարողի մտադրությունը, և քանի որ մտքի ուղեծրությունը գրեթե փակ է լեզվի մեջ, նշանակում է պայմանական կոչվող եղանակի ապառնի ձևերը ավելի հաճախ պետք է գործածվեն, քան սահմանական ապառնի ձևերը։

Այս եզրակացությունը, որ բխում է պայմանական եղանակի ապառնին սահմանական համարելու մեր պնդումից, ապացուցվում է հետևյալ փաստերով։ Ի. Վ. Ստալինի «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի մասին» աշխատության մեջ շուրջ 110 պայմանական ապառնիի դիմաց գործածված է միայն 1 սահմանական ապառնի։ Ն. Ջարյանի «Ռուսների քարտի» մեջ 265 պայմանական ապառնիի դիմաց՝ ընդամենը 4 սահմանական ապառնի, իսկ Դ. Էմինի «Նոր ճանապարհ» գրքում և Հր. Քոչարի «Սրբազան ուխտ» պատմվածքում չի գործածված և ոչ մի սահ-

մանական ապառնի: Այս բոլոր աշխատություններում միասին վերցրած շուրջ 430 պայմանական ապառնիի դիմաց ունենք ընդամենը 5 սահմանական ապառնի: Նկատենք, որ այս գրքերի ողջական օրինակներում ողջներենը պետք է ունենա 435 սահմանական ապառնի: Սա պարզապես քերականական պարագոքս է:

Ինչպե՞ս մեր քերականներին չի հետաքրքրում այն հարցը, թե եթե սահմանական ապառնին լավելի հաստատ կամ վճռական է արտահայտում խոսողի վերաբերմունքը գործողությունից ունեցող նկատմամբ, քան պայմանական ապառնին, ապա ինչու մեր ամենավճռական և անառարկելիորեն ստույգ կատարվելիք գործողությունների համար հիմնականում գործածում ենք հենց այդ ենթադրական կամ պայմանական կոչված ձևերը և ինչու ողջներենի սահմանական ապառնիի կատարյալ կերպին համապատասխանում է այդ նույն պայմանական և ոչ թե սահմանական ապառնին: Սրանք քննարկվող բայաձևերի էությունը անմիջականորեն վերաբերող հարցեր և փաստեր են, որոնց կողքով չի կարելի լուր անցնել:

Յույց տալու համար, որ իսկապես քննվող երկու բայաձևերի միջև գործողությունը ստույգ կատարվելու տեսակետից տարբերություն չկա և որ նույն գործողությունը համար կարող են գործածվել այդ երկու ձևերն էլ, բայց առաջնությունը տրվում է ենթադրական կոչվող ձևին: Բերենք մի օրինակ ևս (Ն. Ջարյանի «Հացավանդ-ից»): Սանդարյանը զանգահարում է Լիպարիտին, հայտնում նույն օրը երեկոյան իր ուսկում գալու մասին, դալու պատճառը, նպատակը. այնպես որ Լիպարիտը Սանդարյանի գալը գիտակցում է ոչ թե որպես ենթադրություն, այլ որպես ստույգ կատարվելիք գործողություն: Եվ Լիպարիտը այդ ստույգ կատարվելիք գործողությունը Նազարյանին հայտնում է ենթադրական եղանակի ձևով. «Երեկոյան նա (Սանդարյանը) այստեղ կլինի և ուսկումի նիստում կքնենք քո հեռագիրը»:

ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌԵԻԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՈՃԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հոգնակի երրորդ դեմքը գործածվում է խրատական առածներում. Երկաթը տաք-տաք կծեծեն: Օձին չեն փաղաքչի:

2. Գործածվում են բնության և հասարակության այս կամ այն երեվոյթը հաստատող առածներում: Ձուկը ջրում կմեծանա:

3. Գործածվում են տվյալ տեսակի առակների յուրահատուկ հատկանիշը ցույց տալու համար: «Դե գեղի աղջիկ, գեղի տղա կխոսեն էլ, կծիծաղեն էլ (Սիրաս)»:

4. Գործածվում են տվյալ պայմաններից բխող անխուսափելի հետեվանքն արտահայտելու համար: «Այս միջավայրում, այսպիսի մենակություն մեջ փրկիսփան էլ կվայրենանա, հեր մնաց քեզ պես կենսաթրթիո կինը» (Սիրաս):

5. Հարցական նախադասություններում հաճախ գործածվում են ժըխտական իմաստով: «Սիրտ, իհարկե սիրտ կղիմանա (—չի դիմանա) այս միջավայրում (Սիրաս): «Բա թե՛ ես կարծում, մենք կթողնենք (—չենք թողնի), որ Մուկուչի քեֆին իզուր տեղը դիպչեն» (Արաղի):

6. Ներկա ժամանակում այնպիսի գործողություն կամ վիճակ չույժ տալու համար, որի ընթացքի մեջ լինելը խոսողը գիտե ոչ թե ականատես լինելով կամ ուղղակի ճանապարհով, այլ այդ գործողության կամ վիճակի համար անհրաժեշտ և այլ պայմանները նկատի ունենալով, Այս դեպքում բայը որոշ չափով ստանում է ենթադրականության երանգ: Նա այժմ տա- նը կլինի: Նա այժմ եկած կլինի: Այսպիսի դեպքում բայը գործածվում է միայն երրորդ գեմքով:

Ո՞րն է այդ որոշ ենթադրականության պատճառը:

Հիշենք, որ սահմանականի ներկան չույժ է տալիս փաստական գոր- ծողություն, գործողության ընթացք, իսկ ապառնի չույժ տված գործո- ղությունը դեռ չի կատարվում: Վերոհիշյալ օրինակների մեջ ընդգծված բայերը ապառնի ձևեր են, որոնք, սակայն, գործածված են ներկա ժա- մանակի իրողություն չույժ տալու համար:

Եվ երբ սահմանականի ապառնին, որի չույժ տված գործողությունը որպես փաստ դեռ չկա խոսելու վայրկյանին, գործածվում է սահմանական եղանակի ներկայի դերում, որի համար անհրաժեշտ է փաստական գործո- ղության կատարման ընթացք, պարզ է, որ գործողության ստույգ լինելը որոշ անբավարարության երանգ պիտի ստանա:

Պայմանական եղանակի այս առումի որոշ ենթադրականությունն է պատճառը, որ Մ. Արեղյանը իր տարբեր աշխատություններում ենթադրա- կան եղանակի սահմանումից անմիջապես հետո բերում է հենց այդ տիպի օրինակներ:

7. Գործածվում են անցած ժամանակահատվածի մեջ մտնող ապառ- նի ժամանակի համար, երբ խոսողը իրեն գնում է այդ անցյալ ժամա- նակում: Մտածում էի, թե ինչպես միշտ, այս անգամ էլ նա կհանգստանա և կմոռանա (Արազի): Մտքովս չէր անցնում, թե դու կհրամանս մեր կողմերը (Դ. Դեմիրճյան): Ընդգծված բայերի չույժ տված գործո- ղությանը խոսողը նայում է անցյալից, որպես կատարվելիքի: Գարոդ է նաև, որ խոսողը ներկայից նայի այդ գործողությունների վրա, այդ- պիսի դեպքերում համապատասխան բայերը գրվում են անցյալ ժա- մանակով: Մտածում էի, թե ինչպես միշտ, այս անգամ էլ նա կհան- զըստանա և կմոռանա: Մտքովս չէր անցնում, թե դու կհրամանիր մեր կողմերը:

8. Երբեմն գործածվում են որևէ գործողության պայման արտահայ- տելու համար և տարբերվում է ըղձական եղանակով արտահայտած պայ- մանից նրանով, որ խոսելու մոմենտին գրվում է այդ պայմանի ստույգ կատարելի լինելը: Մենք համաձայն ենք վճարել նրա առաջագրած վար- ձը, եթե մեզ եփած ջուր կտա թեյի համար (Ս. Ջորյան): Հասկացվում է, որ բնական վարձողների համար անհրաժեշտ է նախօրոք իմանալ չուր տալու գործողության ստույգ կատարելի լինելը:

9. Գործածվում են ամենամոտ, խոսելու վայրկյանին կից ժամանա- կում անսպասելի գործողություն արտահայտելու համար: Ի՞նչ կասեք դուք այդ մասին, Այժմ ես կանդրադառնամ ձեր հարցին:

10. Շեշտված երկրորդ գեմքը գործածվում է հրաման, կարգադրու- թյուն արտահայտելու համար:

«էգուց կերբաս և իմացար,
 Եզներս ետ կպահանջես.
 Կասես, «արդս շատ է հոժար
 Ինքս կասես, համաձայն չեմ» (Ն. Ջարյան):
 «Սրանից հետո բոլոր հարցերս կդիմես Առաքել Ամուն» (Ն. Ջարյան):

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻՆ

Չնայած որ քննարկվող եղանակը կոչվում է պայմանական կամ ենթադրական, նրա անցյալի ապառնիի սահմանման մեջ իրավամբ չկա նույնիսկ ակնարկ ենթադրականության մասին: Պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնին ցույց է տալիս, որ անցյալի համեմատությունում ենթակայի կատարելիք մի գործողություն կամ եղելություն չի կատարվել, բայց կկատարվեր, եթե նրան նախորդեր մեկ ուրիշ գործողություն կամ եղելություն¹:

Եվ իսկապես, պայմանական եղանակի անցյալի ապառնիի պայմանականությունը նույնիսկ երևում է այդ բայաձևերի առանձին գործածությունից: Կոչնայի բայը առանց որևէ պայմանի կցման ցույց է տալիս, որ անցյալում գնալու գործողության համար կային որոշ պայմաններ, առնչվածն ցանկություն, բայց այդ գործողությունը չի կատարվել եղած պայմանների անբավարարության, այսինքն՝ այլ անհրաժեշտ պայմաններ չլինելու պատճառով: Ուրեմն՝ բայը ինքնին պայմանական է:

Արդ տեսենք, թե որն է նույն եղանակից (ըզական) նույն եղանակիչով (կ) երկու տարբեր եղանակներ կազմվելու պատճառը: Պայմանական անցյալն ու ապառնին կազմվում են ըզական եղանակի համապատասխան ժամանակների վրա կ եղանակիչի հավելումով: Կ եղանակիչի ծագումով զբաղվել են Այտնյանը, պրոֆ. Մ. Արեգյանը, որոնք չնայած տարբեր ձևով են բացատրում կ-ի ծագումը, բայց բոլորի մոտ էլ այդ եղանակիչը կամ նրա նախնական ձևը ունի հիմնականում նույն իմաստը՝ այն է՝ կա, այո, այսինքն ցույց է տալիս գոյություն, լինելություն հաստատում:

Այժմ ստուգարանորեն վերլուծենք պայմանական եղանակի երկու ժամանակներն առանձին-առանձին:

1. Ըզական անցյալը ցույց է տալիս անցյալում ցանկալի գործողություն: Յանկալիությունը ինքնին ցույց է տալիս, որ գործողությունը ռեալ չէ անկախ ժամանակից: Որովհետև այս դեպքում ցանկալիությունից բխող ոչ ռեալությունը վերաբերում է անցյալին, նշանակում է ինքնին բացառվում է գործողության ռեալությունը այդ ժամանակում, քանի որ ժամանակն անցել է: Ռեալություն, լինելություն ցույց տվող կ եղանակիչը միանալով անցյալում ցանկալի, բայց չկատարված գործողություն ցույց տվող բային, հակադրվում է նրան և կազմված նոր բայաձևի մեջ աեղ են գտնում երկու հակասական բովանդակություններ: Ստացվում է անցյալում կատարվելիք, բայց չկատարված գործողության կատարման հնարավորություն: Եթե կար կատարման հնարավորություն, ինչու բացառվում է կատարված լինելը: Կատարման բացառված լինելը ցույց է տալիս, որ այդ հնարավորությունը թերի է, պակասում են որոշ պայմաններ, որոնց

¹ Ա. Վառիյան, Հայոց լեզվի գասագիրք, 1952, էջ 276:

լրիվ առկայության դեպքում միայն կկատարվեր գործողությունը՝ Ուրեմն՝ այդ եղանակային ձևից ինքնին բխում է պայմանականությունը (կզնայի, կգրեի, կհաղթեինք)։

2. Ըղձակա՞ն ապառնին ցույց է տալիս ապառնիում, խոսելուց հետո ցանկալի գործողություն։ Քանի որ այս դեպքում ցանկալությունից բխող չկատարվածությունը վերաբերում է ապագային, ուստի և ինքնին չի բացառվում գործողությանն ունակ դառնալու հնարավորությունը, նրա կատարումը ցանկալի է, կարող է կատարվել։ Եվ ահա նույն դեպքում, լինելություն ցույց տվող եղանակիչը միանալով ըղձակա՞նի ապառնիի հետ, վերջինիս ցանկության շտկանգակությանն ավելացնում է իր իմաստը, ստացվում է ապագայում ցանկալի գործողության կատարում, գոյություն, այսինքն, ապագա ստույգ գործողություն, ստույգ կատարվելիք գործողություն (կգամ, կգրեմ, կհաղթեինք)։

Այս եղանակային ձևի տարբեր ժամանակների ստուգարանումը մի անգամ ևս բացահայտում է, որ ենթագրական կոչվող եղանակի երկու ժամանակները միանգամայն տարբեր էություններ են, տարբեր եղանակներ և չի կարելի միայն ձևական հատկանիշի վրա հիմնվելով, դնել միևնույն եղանակի մեջ։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՅՅՆՈՒ ԶԵՎԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Քանի որ այս բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարվելիք, բայց չկատարված գործողություն, ուստի դրանք գործածվում են նաև ներկա և ապագա ժամանակին՝ վերաբերող այնպիսի գործողությունների համար, որոնց կատարման անհնարինությունը հայտնի է խոսողին։

Օրինակներ. Հիմա ևս կմտնեի Համլետի շարքերը, եթե տարիքս համապատասխաներ։ Ես վաղը մեծ ուրախությամբ կգայի Ձեզ հետ զրոսնելու, եթե ժամանակ ունենայի։

2. Անցյալ ժամանակում կարող են երկու գործողություններ իրար համոզել։ Երբ համոզող գործողությունը ցույց տվող բայը պատկանում է պայմանական եղանակին, նա կորցնում է իր պայմանականությունը։ Օր. մինչև Սրամբ կգար, Հետոն ճանապարհվեց։ Կգար բայը այստեղ պայմանական իմաստ չունի, որովհետև ճանապարհվելու գործողությունը նախորդում է նրան, նա կարող է կատարվել (կարող է և չկատարվել, այդ էական չէ), ճանապարհվելուց հետո, ուստի և ապառնի է անցյալում կատարված մի գործողության (ճանապարհվել) նկատմամբ։ Իսկ մենք գիտենք, որ կ եղանակիչով բայերի ապառնիի ձևերը պայմանական չեն։

Այդ ապառնիությունն է պատճառը, որ չնայած բայի գործողությունը անցյալին է վերաբերում, բայց կարող է գրվել նաև ապառնի ժամանակով, երբ խոսողը կամ հեղինակը իրեն ներկայացնում է որպես անցյալի այդ դեպքերին ներկա, իրեն մտքով դնում է այդ անցյալում։ Մինչ ծառաները կբերեին նրա պահանջածը՝ նա կանգնեց և սկսեց խորը նայել նախարարներին։— Մինչ Ձվիկը կվերագառնար՝ Վասակն սկսեց լուռ անց ու գարձ անել (Դ. Դեմիրճյան)։ Հիմա, մինչ ծառաները կբերեն նրա պա-

հանջածը՝ նա կանգնում է և սկսում է խորը նախարարներին: Մինչ Զվիկը կվերադառնա՝ Վասսակն սկսում է լուռ անց ու դարձ անել:

3. Առաջին ուղադրության արժանի է, ուզենալ (ուզել) բայի պայմանական ձևի գործածությունը: Ուզենալ բայի պայմանական ձևը գործածվում է երկու տարբեր նպատակներով:

ա) երբ ուզենալ (ուզել) բայը գործածվում է ուզենալու, ցանկության հոգեկան երևույթը առանձին, ինքնին (ինքնին հարաբերական իմաստով, որովհետև ուզենալու հետ միշտ կապվում է որևէ բան) ցույց տալու համար, ունի սովորական պայմանական իմաստ:

— Երեկ գնացինք թատրոն, Արամը չեկավ, չէր ուզում:

— Նա կուզենար, եթե իմանար, որ Վաղարշյանն էր խաղալու:

բ) Մենք իր տեղում տեսանք, որ պայմանական եղանակով բայի ցույց տված գործողության կատարման համար կա որոշ պայման, երբեմն այդ պայմանը կարող է լինել խոսողի ցանկությունը:

Այսպիսի դեպքերում երբեմն պայմանական եղանակի բաղադրիչ ցանկության մոմենտը առանձնացվում է ուզել կամ ուզենալ բայով և վերջինս դրվում է պայմանական եղանակով, բայց փաստորեն պայմանական է ոչ թե ուզել բայը, այլ բուն գործողությունը ցույց տվող բայը, որը, սակայն, պայմանական եղանակով չի տրվում:

Օրինակներ. «Մարդը դրանով թերևս կուզեր արդարացնել իր վարմունքը» (Սիրաս): Կուզեի լինել ստախանովական: Քանի որ պայմանական է բուն գործողությունը ցույց տվող բայը և ոչ թե ուզենալը, որպես ցանկություն, իսկու պայմանականի ձև է ստանում ուզել բայը: Պատճառն այն է, որ դրանով ցանկությունն է՛լ ավելի է ընդգծվում, քանի որ ցանկացած գործողությունը չի իրականացել, իսկ պայմանական անցյալի ցույց տված գործողությունը իրականացած չէ:

* * *

Քերականությունը լեզվին տիրապետելու գործում ունեցած իր բացառիկ դերը բնավ չի սահմանափակում նրանով, որ ներկայացնի քերականական տվյալ միավորի միայն ձևական հատկանիշը, այլ դրա հետ միասին նաև, թե ինչ է ներկայացնում իրենից այդ ձևը, ինչ իմաստ ունի, ինչ ֆունկցիա է կատարում լեզվի մեջ. ի՞նչ օգուտ, եթե աշակերտները սովորեն, որ կ եղանակիչով բայաձևերը պատկանում են պայմանական կամ ենթադրական եղանակին, երբ նույն աշակերտները, մեր աշխատավորությունը, ինտելիգենցիան այդ բայաձևերի ասպարեզում ժամանակով, ինչպես տեսանք վերևում, արտահայտում են ստույգ կատարվելիք գործողություն: Մեր քերականությունը պայմանական եղանակի արդի ճանաչմամբ ճիշտ չարտացոլելով այդ օբյեկտիվ իրողությունը, դրանով իսկ չի նպաստում լեզու-գործիքի դիպուկ և ճիշտ գործածմանը, այլ ընդհակառակը՝ ապակողմնորոշում է մարդկանց:

Ի. Վ. Ստալինը սովորեցնում է, որ ձևաբանությունը իր օրենքները կառուցելիս, վերցնում է ժայն ընդհանուրը, որը կազմում է բառերի փոփոխությունների... հիմքը¹: Պայմանական կամ ենթադրական կոչվող

¹ Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 53:

եղանակի անցյալի և ապառնի ձևերը եղանակային ընդհանուր հիմք չունեն, ուրեմն ե մեկ օրենքի ենթարկվել չեն կարող։ Այդ ձևերի անցյալը ցույց է տալիս պայմանական գործողություն, իսկ ապառնին՝ ստույգ կատարվելիք գործողություն, այսինքն՝ վերջինս ունի մեկ ընդհանուր հիմք սահմանական եղանակի հետ, ուրեմն և սահմանական է։ Այդ են ցույց տալիս թե այդ բայաձևերի եղանակային իմաստի մանրամասն քննությունը, թե համեմատությունը ուսերենի հետ, թե կաղմոթյան վերլուծությունը։

Ուրեմն, հայերենում, ինչպես ուսերենում և շատ լեզուներում, պայմանական եղանակը ապառնի շունի։ Միևնույն անցյալի ձևը գործածվում է նաև ներկա և ապառնի ժամանակների համար (հիմա, վաղը կգայի, եթե ժամանակ ունենայի, բայց չատ եմ գրողված)։ Ունենք սահմանական ապառնի երկու ձև. ապառնի առաջին՝ կգրեմ և ապառնի երկրորդ՝ գրելու եմ։ Նույն եղանակի նույն ժամանակի մի քանի ձևեր ունենալը արտասովոր բան չէ։ Ինչպես հայտնի է, ժամանակակից ուսերենը ունի սահմանական եղանակի երկու ապառնի (կատարյալ և անկատար), գերմաներենը՝ նույնպես (ապառնի առաջին և ապառնի երկրորդ), մի ժամանակ մոնղոլերենում սահմանական եղանակի անցյալ ժամանակն ունեցել է երեք ձև և այլն։

Այսպիսով, թեև քննարկվող բայաձևերը ունեն միևնույն եղանակիչը, բայց լեզուն այդ բայաձևերի տարրեր ժամանակների մեջ դրել է տարրեր եղանակային բովանդակություն։ Ինչու անտեսել այս հետաքրքրական ու յուրահատուկ երևույթը, փոխանակ այն արձանագրելու, բացատրելու և պատճառարանելու։ Իրողության, տվյալ գեպում քերականության խնդիրն է ուսումնասիրվող իրողությունը ներկայացնել այնպես, ինչպես որ նա կա։